Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
օգոստոսի 17-ի N 1018 -Ն որոշման

Կ Ա Ր Գ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍԵՎԱՆԱ ԼՃԻՑ ԲԱՑ ԹՈՂՆՎՈՂ ՋՐԻ՝ 170 ՄԼՆ Մ^3–Ը ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՉԱՓԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԻՆ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԱՃԱՌՔԻՑ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄՈՏ ՀԱՍՈՒՅԹԻ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋԱ-ՑՈՂ ՇԱՀՈՒՅԹԻ (ԼՐԱՑՈՒՑԻՉ ՇԱՀՈՒՅԹԻ) ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են 2017 թվականի ընթացքում Սևանա լճից բաց թողնվող ջրի՝ 170 մլն մ^3–ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրա-կան էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնե-տիրական ընկերության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մոտ հասույթի և կատարված ծախսերի տարբերությունից առաջացող շահույթի (այսուհետ՝ լրացուցիչ շահույթ) հաշվարկման և վճարման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սևանա լճից 2017 թվականի ընթացքում բաց թողնվող ջրի՝ 170 մլն մ^3–ը գերազանցող չափաքանակի հաշվին արտադրվող էլեկտրական էներգիայի վաճառքից՝

1) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության մոտ յուրաքանչյուր հաշվարկային ամսում առաջացող լրացուցիչ շահույթը ($Շ_{ՄԷԿi}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Շ_{ՄԷԿi} = Է_{ամi} * ՍԴ_{ՄԷԿi} – Ծ_1,$$

որտեղ՝

i-ն համապատասխան հաշվարկային ամիսն է,

$Է_{ωni}$-ն i-րդ հաշվարկային ամսում Սևանա լճից լրացուցիչ բաց թողնված ջրաքանակի հաշվին «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից առաքված էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտ/ժ),

$ՍԴ_{ՄԷԿi}$-ն i-րդ հաշվարկային ամսվա համար Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում սահմանված առաքվող էլեկտրաէներգիայի դրույքն է (դրամ/կՎտժ)՝ առանց ԱԱՀ-ի,

$Ծ_1$-ն i-րդ հաշվարկային ամսում Սևանա լճից լրացուցիչ բաց թողնված ջրաքանակի հաշվին արտադրված էլեկտրական էներգիայի վաճառքից «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության մոտ առաջացող լրացուցիչ շահույթից հաշվարկվող շահութահարկի գումարն է (դրամ).

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մոտ յուրաքանչյուր հաշվարկային ամսում առաջացող լրացուցիչ շահույթը ($Ծ_{ՀԷՑi}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$Ծ_{ՀԷՑi} = Է_{ωni} * (ՍԴ_{Հդ-5i} – ՍԴ_{ՄԷԿi}) – Ծ_2$,

որտեղ՝

$ՍԴ_{Հդ-5i}$-ն i-րդ հաշվարկային ամսվա համար Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության շոգեգազային ցիկլով էլեկտրական էներգիա արտադրող «Հրազդան-5» կայանի համար երկդրույք սակագնային համակարգում սահմանված առաքվող էլեկտրաէներգիայի դրույքն է (դրամ/կՎտ/ժ)՝ առանց ԱԱՀ-ի,

$Ծ_2$-ն i-րդ հաշվարկային ամսում Սևանա լճից լրացուցիչ բաց թողնված ջրաքանակի հաշվին արտադրված էլեկտրական էներգիայի վաճառքից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության մոտ առաջացող լրացուցիչ շահույթից հաշվարկվող շահութահարկի գումարն է (դրամ):

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված $Է_{առi}$ մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$Է_{առi} = Ջ_{Սևանi} * 0.11 + Ջ_{Հրազդանi} * 0.31 + Ջ_{Արգելi} * 0.66 + Ջ_{Արզնիi} * 0.27 + Ջ_{Քանաքեռi} * 0.38 + Ջ_{Երևան1i} * 0.2 + Ջ_{Երևան3i} * 0.07$,

որտեղ՝

$Ջ_{Սևանi}$-ն i-րդ հաշվարկային ամսում Սևանա լճից լրացուցիչ բաց թողնված ջրաքանակն է (խորանարդ մետր),

$Ջ_{Հրազդանi}$-ն i-րդ հաշվարկային ամսում Սևանա լճից լրացուցիչ բաց թողնված և «Հրազդան» ՀԷԿ-ով անցած ջրաքանակն է (խորանարդ մետր),

$Ջ_{Արգելi}$-ն i-րդ հաշվարկային ամսում Սևանա լճից լրացուցիչ բաց թողնված և «Արգել» ՀԷԿ-ով անցած ջրաքանակն է (խորանարդ մետր),

$Ջ_{Արզնիi}$-ն i-րդ հաշվարկային ամսում Սևանա լճից լրացուցիչ բաց թողնված և «Արզնի» ՀԷԿ-ով անցած ջրաքանակն է (խորանարդ մետր),

$Ջ_{Քանաքեռi}$-ն i-րդ հաշվարկային ամսում Սևանա լճից լրացուցիչ բաց թողնված և «Քանաքեռ» ՀԷԿ-ով անցած ջրաքանակն է (խորանարդ մետր),

$Ջ_{Երևան1i}$-ն i-րդ հաշվարկային ամսում Սևանա լճից լրացուցիչ բաց թողնված և «Երևան ՀԷԿ-1»-ով անցած ջրաքանակն է (խորանարդ մետր),

$Ջ_{Երևան3i}$-ն i-րդ հաշվարկային ամսում Սևանա լճից լրացուցիչ բաց թողնված և «Երևան ՀԷԿ-3»-ով անցած ջրաքանակն է (խորանարդ մետր):

4. Սույն կարգի 3-րդ կետում նշված՝ «ՋՍևանի», «ՋՀրազդանի», «ՋԱրգելի», «ՋԱրզնիի», «ՋՔանաքեռի», «ՋԵրևանի», «ՋԵրևանՅի» մեծությունների վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր հաշվարկային ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 20-ը «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություններին տրամադրում է Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն:

5. Սույն կարգի 2-րդ կետի համաձայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություններում հաշվարկված լրացուցիչ շահույթը վճարվում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական ստորաբաժանումում Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կողմից բացված արտաբյուջետային հաշվին մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 30-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ